Հետպատերազմյան խնդիրներ. բռնի տեղահանված անձանց վերաբնակեցում

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Տեղահանվածների քանակը և տիպաբանությունը

Արցախում ծավալված 44-օրյա լայնամասշտաբ մարտական գործողությունները ունեցել են և դեռ կունենան լրջագույն հետևանքներ: Հետպատերազմյան շրջանի կարևորագույն հարցերից է տեղահանվածների խնդիրը: Թե որքան մարդ է տեղահանվել այս ընթացքում, ինչ խմբերի են դասակարգվում, ինչպիսի ընդհանրություններ կամ կյանքը շարունակելու ինչպիսի որոշումներ ունեն, դժվար է հստակ ասել. պաշտոնական վիճակագրություն կարծես չկա:

Մինչդեռ ոչ պաշտոնական, մասնագիտական շրջանակները կարծում են, որ մոտավոր հաշվարկներով 100-110 հազար մարդ է տեղահանվել: Նրանց մեծ մասը՝ շուրջ 90-100 հազարը ՀՀ է տեղափոխվել, փոքր մասը՝ Արցախի տարբեր համայնքներ: Մոտավոր հաշվարկներով՝ տեղահանված անձանցից 50 հազարն արդեն վերադարձել է: Կրկնենք, սրանք լոկ գնահատականներ են. իրավիճակը գնահատելու լուրջ՝ մեթոդապես հիմնավորված մեխանիզմ չկա: Սա մասնագիտական կարծիք է՝ հիմնված տարբեր հանգամանքների վրա:

Տեղահանվածների մի մասն այն բնակավայրերից են, որոնք հայկական ուժերի վերահսկողության տակ են մնացել, այսինքն մարդիկ կարող են վերադառնալ իրենց տները: Այս խմբի մեջ փոքր ենթախումբ են կազմում այն մարդիկ, ում տներն ավերվել են: Խոսքն ապակիների ջարդվելու մասին չէ, քանի որ դրանք արագ և պետական աջակցությամբ վերականգնվում են: Լրջորեն ավերված տները վերականգնելը երկար ժամանակ է պահանջելու: Որոշ դեպքերում տներն ամբողջությամբ փլվել են, և նորերը պետք է կառուցվեն: Մյուս ենթախումբը կազմում են մարդիկ, որոնք ունեն իրենց տները և կարող են վերադառնալ, մինչդեռ, ոչ բոլորն են վերադարձել և ոչ բոլորն են ցանկանում վերադառնալ:

Երկրորդ խումբն այն քաղաքացիներն են, որոնք զավթված տարածքներից են՝ Շուշի քաղաք, Քարինտակ, Հադրութ քաղաք, փաստացի նաև Հադրութի շրջանն ամբողջությամբ: Բռնազավթված են նաև Ասկերանի շրջանի վերին ենթաշրջանի մի քանի գյուղ, Մարտունու շրջանի մի քանի գյուղ, Մարտակերտի շրջանի Մատաղիս և Թալիշ գյուղերը, Քաշաթաղի շրջանի հարավային բնակավայրերը: Այս շրջանների բնակիչները հնարավորություն չեն ունեցել որևէ բան վերցնել իրենց հետ և փաստացի ունեն ամեն ինչի կարիք:

Երրորդ խումբն Ադրբեջանին հանձնված շրջանների բնակիչներն են. Շահումյանի ամբողջ շրջանը՝ բացառությամբ Չարեքթար և Ակնաբերդ գյուղերի (Չարեքթար գյուղի բնակիչները անորոշության պատճառով տներն այրել ու հեռացել են), Քաշաթաղի հյուսիսային բնակավայրերը, Մարտունու շրջանի Վազգենաշեն գյուղը, Մարտակերտի շրջանի 6 համայնքները:

Չորրորդ խումբը Բերձոր, Աղավնո, Ներքին Սուս բնակավայրերի բնակիչներն են: Այստեղ էլ մարդիկ, անորոշությամբ և անվտանգության երկարաժամկետ ռիսկերով պայմանավորված, լքել են բնակավայրերը: Այս երեք բնակավայրերը միջանցք են կազմում, իսկ միջանցքի հարցը արտաքին քաղաքականության, բանակցությունների խնդիր է:

Ընդհանուր առմամբ, կրկին մոտավոր հաշվարկներով 40 հազար արցախցի անտուն է մնացել, 10-12 հազար բնակիչ հանձնված տարածքներից են, մնացածը՝ բռնազավթված տարածքներից: Սա նշանակում է, որ անտուն մնացած արցախցիների ճնշող մեծամասնությունը զրկվել է ամեն ինչից՝ տուն, գույք, կենցաղային պարագաներ, հագուստ: Այս մարդկանց մեծ մասն այսօր ՀՀ-ում է, սակայն շուրջ 5000 մարդ արդեն վերադարձել են Արցախ:

Պետք է հաշվի առնենք, որ Քաշաթաղի և Շահումյանի բնակիչների զգալի մասը դժվարությամբ հետ կգան Արցախ, քանի որ հիմնականում Հայաստանից վերաբնակիչներ են, ունեն սոցիալական ամուր կապեր ՀՀ-ի հետ, ոմանք ՀՀ-ում ունեն բնակարաններ: Որոշ դեպքերում բնակարանները վերանորոգման կարիք ունեն, սակայն որպես ժամանակավոր կացարաններ դեռ ծառայում են: Վերաբնակիչների մի մասը կրկնակի տեղահանվածներ են: Շահումյանի շրջանում, հիմնականում շահումյանցիները, ինչպես նաև Ադրբեջանից փախստականների մի մասը բնակվում են Ակնաբերդում, որը պետք է վերաբնակեցվեր պետական ծրագրով: Փաստացի Մարտակերտի տարածքի մեջ է գտնվող Ակնաբերդը Սարսանգի ափին է: Այն վարչականորեն պատկանում է Շահումյանի շրջանին, և այնտեղ հիմնականում շահումյանցիներ են բնակվում: Շահումյանի շրջանում էլ կան մարդիկ, որ փախստական են Ադրբեջանից և տարբեր վայրերից: Այս մարդկանց պարագայում խնդիրներն ավելի շատ են, Հայաստանում չունեն կացարան և հիմնականում ցանկանում են հետ գալ:

Ենթադրվում է, որ 1-2 ամսվա ընթացքում 20-25 հազար մարդ վերադառնալու խնդիր է ունենալու, եթե նրանց՝ ՀՀ-ում վերաբնակեցնելու հարցը ՀՀ կառավարության կողմից չլուծվի լայնածավալ ծրագրի միջոցով:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Վերադարձի կազմակերպման խնդիրները

Նպատակն, անշուշտ, այն է, որ մարդիկ վերադառնան Արցախ, երկարաժամկետ հատվածում Արցախում ունենանք կայուն մշտական բնակչություն, որոնց ուժերով կկարողանանք Արցախը զարգացնել այն հույսով, որ ինչ-որ պահի ավելի լավ ժողովրդագրական և անվտանգային վիճակ ստանանք: Այս պահին վերադարձի կազմակերպման գլխավոր խնդիրն անորոշությունն է՝ առաջին հերթին անվտանգության, այնուհետև սոցիալական խնդիրների հետ կապված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախում ծավալված լայնամասշտաբ մարտական գործողությունները լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրներ են առաջացրել Արցախում և Հայաստանում ապրող արցախցիների համար՝ առաջին հերթին պետք է հասկանալ, թե որքան մարդ է տուժել. նախ՝ որքան մարդ է կորցրել իր բնակարանը, ունեցվածքը, եթե նրա բնակավայրը գտնվում է ադրբեջանական օկուպացիայի տակ. երկրորդ՝ եթե նրա բնակավայրը հայկական կողմի վերահսկողության տակ է, սակայն հրթիռա-հրետակոծության արդյունքում կորցրել է բնակարանը, շարժական գույքը և այլն: Այսինքն՝ նախ խնդիր կա հաշվառելու, գույքագրելու իրական կորուստները:

Օժանդակության ենթակա խմբերին օգնելու համար, նախ, անհրաժեշտ է հասկանալ, թե որտեղ են գտնվում, նրանցից քանիսը բնակության, մշտական եկամուտի խնդիր ունեն, որից հետո անհրաժեշտ է այդ խնդիրները վերլուծել կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով:

Օժանդակության ծրագրերը երկու մեծ խմբի պետք է բաժանել: Ծրագրեր, որոնք իրականացվում են Արցախում և Հայաստանում՝ նկատի ունենալով, որ քաղաքացիների մի մասը դեռ ՀՀ-ում է: Իհարկե հիմքում պետք է դնել կարևոր սկզբունքը՝ բարենպաստ պայմաններ ձևավորել նրանց Արցախ վերադարձի համար:

Այս պահին Արցախում գտնվող բռնի տեղահանվածների և թշնամու գործողությունների հետևանքով բնակարանները կորցրածների գլխավոր խնդիրը կացարանի հարցն է: Մի մասը դա լուծել է բարեկամների, հարազատների տանը տեղավորվելով, սակայն դա կարճաժամկետ լուծում է: Մի մասին Արցախի կառավարությունը տեղավորել է հյուրանոցներում, դպրոցներում, տարբեր հասարակական նշանակության օբյեկտներում, ինչը ևս երկարաժամկետ լուծում դժվար է համարել, հատկապես, որ այդ մարդկանց մի մասը եկամուտ չունի, իսկ սննդային ապահովում գրեթե չի իրականացվում:

ՌԴ-ն հայտարարել է առաջիկայում «արագ հավաքվող» 8000 բնակարանի կառուցման մասին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձմեռ է, իսկ մարդկանց մի մասը բառիս բուն իմաստով գիշերում է որտեղ պատահի՝ մեքենաներում, ավտոտնակներում, այգիներում, մեզ պետք են արագ լուծումներ: Որպես տարբերակ՝ կարելի է քննարկել վրանային ավանների հիմնումը: Իրային ապահովման տեսանկյունից նման հնարավորություններ ունեն զինված ուժերն ու արտակարգ իրավիճակների նախարարությունը: Այս հարցով կարելի է ստանալ նաև ՌԴ աջակցությունը:

Սննդային ապահովման տեսանկյունից, պետք է հստակ, ըստ խմբերի, գույքագրել կարիքավորներին՝ ովքեր չունեն մշտական եկամուտ և ապահովել սննդով: Մի մասը կարելի է իրականացել ըստ նրանց ոչ մշտական բնակության վայրի՝ հյուրանոցների, դպրոցների և այլն, իսկ ովքեր իրավիճակի բերումով տարբեր վայրերում են, կազմակերպել որևէ տարածքից սննդի հատկացումը: Թվաքանակից կախված՝ կարելի է դիտարկել նաև կամավորների միջոցով առաքումների կազմակերպումը բարձր տարիքի կամ հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար:

Ունենք խմբեր, որոնք որևէ ձևով բնակելի կամ ոչ բնակելի տարածքներում բնակություն են հաստատել, սակայն ջեռուցման սարքերի, անկողնու և բնակության համար նվազագույն պայմանների ապահովման խնդիրներ ունեն: Նվազագույն ծախսերով կարելի է հասնել այս խմբերի համար նվազագույն այնպիսի պայմանների ապահովմանը, որոնք հնարավորություն կտան նրանց չլքել Արցախը:

Արցախի պետական կառավարման համակարգում լուրջ վերակառուցումների, վերակազմավորումների խնդիր կա, անհրաժեշտություն կա առկա ուժերը կենտրոնացնել և ռեսուրսներն ուղղել՝ ըստ առաջնահերթությունների: Սոցիալական համակարգն ապահովող մարմիններն ու ծառայությունները գերծանրաբեռնված են, սակայն կան պետական մարմիններ, որոնց առջև դրված խնդիրները կարելի է լուծել անհամեմատ փոքր ուժերով:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. դեկտեմբերի 6-ին կայացած՝ «Բռնի տեղահանված անձանց վերաբնակեցում. խնդիրներ, լուծումներ» խորագրով առանց հողումների իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: